

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2020 թվականի դեկտեմբերի 8-10-ը, Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգ

4. Հրավիրող կողմը

ՌԴ «Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության» Դաշնային ծառայություն (Ռոսպոտրեբնադզոր)

5. Գործուղման նպատակը

Այցի նպատակն էր ուսումնասիրել COVID-19 համաճարակի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտում միջազգային փորձը, խորացնել մասնակից երկրների միջև վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցությունը:

6. Քննարկված թեմաները

Միջոցառմանը մասնակցում էին շուրջ 200 պատվիրակ՝ 22 երկրից: Այցի շրջանակներում քննարկվեցին կորոնավիրուսային հիվանդության, ինչպես նաև այլ վարակիչ հիվանդությունների բուժման, տարածման, ախտորոշման և կանխարգելման, պատվաստման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Բելառուսի, Տաջիկստանի, ԵԱՏՄ հանձնաժողովի առողջապահության վարչության ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին ԵԱՏՄ-ի շրջանակներում «Ազատ տեղաշարժ» պետական տեղեկատվական էլեկտրոնային հարթակի գործարկման և դրան Բելառուսի միանալու, ինչպես նաև այլ հարցեր:

Պաստերի անվան Սանկտ Պետերբուրգի համաճարակաբանության և մանրէաբանության ԳՀԻ (Санкт-Петербургского НИИ эпидемиологии и микробиологии имени Пастера), Գիտության դաշնային բյուջետային ինստիտուտի «Կիրառական մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի պետական գիտական կենտրոնի» (Федеральное бюджетное учреждение науки «Государственный научный центр прикладной микробиологии и биотехнологии») և Ռուսպոտրեբնադորի Գիտության դաշնային բյուջետային ինստիտուտի «Վեկտոր» վիրուսաբանության և կենսատեխնոլոգիայի պետական գիտական կենտրոնի (Федеральное бюджетное учреждение науки «Государственный научный центр вирусологии и биотехнологии «Вектор»» Роспотребнадзора) ներկայացուցիչների հետ քննարկվեցին հետագա համագործակցության հարցեր:

Միջազգային համաժողովին հայկական կողմը ներկայացրեց COVID-19 համավարակի համաճարակաբանությունը և հակազդմանն ուղղված միջոցառումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև:

9. Առաջարկությունները

Հայաստանյան պատվիրակության անդամները ջանքեր կներդնեն այցի շրջանակներում ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ:

Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

 Recoverable Signature

X 

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2020թ. դեկտեմբերի 15